Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԵՑ2 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 2. Երևան - 2 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.25.- 30.12.2025թթ. |
| Ներկայացման օր | 16.12.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 48 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 7 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Ազատ ժամանցի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր և խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող վարժությունների, կապերի ընդլայնման, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 10 խմբակ, որոնց մասնակցել են 48 շահառու:
    - Հայ եկեղեցու պատմություն, կերպարվեստ,
    - Կինեզոլոգիա,
    - Երգ,
    - Խոհարարական,
    - Առողջապահական,
    - Ձեռքի աշխատանք,
    - Գրական,
    - Յոգա
    - Մարմնամարզություն-պար
    - Կար

  Կենտրոններում կազմակերպվել է թվով 18 միջոցառում: Շահառուները մասնակցել են տարբեր համերգասրահներում կազմակերպված 14 համերգի, 1 թատերական և 1 օպերային ներկայացման:

  Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված միջոցառումներին մասնակցել է 48 շահառու:

Իրականացված միջոցառումներն են.

- Տարեցների միջազգային օրվա նշում Գյումրիում՝ «Հայկական Կարիտաս»-ի հետ համատեղ: Միջոցառմանը ելույթ ունեցավ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի «Գոհարներ» երգչախումբը: Այնուհետ միջոցառման մասնակից շահառուներն այցելեցին «Վառեմ-մարեմ»-ի պատշգամբ և Մ. Մկրտչյանի տուն-թանգարան:
- Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառում-ներկայացում Շենգավիթի ցերեկային կենտրոնում
- Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառում «Մաքսիմա» ռեստորանային համալիրում,
- Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառում Ավետ Գաբրիելյանի անվան արվեստի կենտրոնի սաների մասնակցությամբ,
- Սերունդների երկխոսություն. ԵՊՀ-ի սոցիոլոգիայի ֆակուլտետի սաների հանդիպումը տարեցների հետ,
- Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառում. թիվ 154 դպրոցի սաների հանդիպումը ցերեկային կենտրոնի տարեցների հետ,
- Մասնակցություն «Մատենա» առաջնորդության և մասնագիտական զարգացման դպրոցի կողմից կազմակերպված էքսկուրսիային՝ Ոսկենի գինու գործարան և շաշկու մրցաշարին,
- QSI միջազգային դպրոցի աշակերտների հանդիպումը ցերեկային կենտրոնի տարեցների հետ,
- Միջոցառում՝ «Ոսկե Աշուն»,
- «Գոհարներ» երգչախմբի ելույթը Ա.Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցած «Կողք կողքի» 6-րդ միջազգային ներառական արտ փառատոնի գալա համերգին,
- Միջոցառում նվիրված ամանորին

Էքսկուրսիաների կազմակերպում

- Սևան, Հայրիվանք,
- Ոզնիների այգի,
- Երևան պարկ,
- Երևան քաղաքային տուր, այցելություն «Կարմիր կամուրջ»,

**Մասնակցություն համերգներին և ներկայացումներին.**

- Հրաչյա Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոն, «Զվարճալի կատակերգություն»,
- Հրաչյա Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոն, Հայաստանի պատանեկան երգի, պարի անսամբլի համերգ,
- Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն, Ջ.Վերդի «Աիդա»,
- Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախումբ և երգչախումբ, խմբավար՝ Նարինե Ոսկանյան, դիրիժոր՝ ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Դուրգարյան, Վաչե Շարաֆյան, Աբու, Լալա Մահարի օրատորիա, նվիրված՝ Ավ.Իսահակյանի 150-ամյակին,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, «Արմենիա» միջազգային երաժշտական փառատոն-փակման համերգ, Տոմազո Բենչոլինի- ֆլեյտա, դիրիժոր Մանուել Նավրի,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Սիմֆոնիկ Եվրոպա, Մայքլ Բարենբոյմ – ջութակ, Սերգեյ Սմբատյան դիրժոր,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, երբ երաժշտությունը արմատներ է տալիս, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան, Ռաֆայելա Գրոմես, թավջութակ,

- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Երևանյան 17-րդ միջազգային երաժշտական փառատոնի փակման համերգ, դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան, դաշնամուր՝ Եվ Գևորգյան,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Գուստավ Հոլաթ «Մոլորակները», դիրիժոր՝ Կոնրադ Վան Ալֆեն,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական կամերային նվագախոումբ, արիաներ իտալական օպերաներից, դիրիժոր Ջուզեպպե Ստիլլիտանո, Իտալիա,
- «Արամ Խաչատրյան» համերգասրահ,Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, փառատոնի բացման համերգ, Հայկ Կազազյան- ջութակ, դիրիժոր՝ Ջանլուկա Մարչիանո,
- Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն, Հայաստանի պետական կամերային երգչախումբ, համերգ՝ նվիրված Շարլ Ազնավուրին,
- «Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն, ֆլեյտահար Մարիամ Մաիլյանի ստեղծագործության 20-ամյակի առթիվ հոբելյանական համերգ,
- Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն, «Արցախ» կամերային նվագախումբ, գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Նարեկ Հախնազարյան,
- Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն, Հայաստանի պետական կամերային նվագախումբ, համերգ - երեկո Մոցարտի հետ, դիրիժոր՝ Վահագն Պապյան, Աստղիկ Վարդանյան, ջութակ, Վահագն Եղիշյան, ալտ:

- **Աշխատանքային/արտթերապիայի կազմակերպման** շրջանակներում Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է թվով 29 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 48 ) ուղղված նյարդային լարված վիճակի թուլացմանը, դրական հույզերի ու մտքերի վրա կենտրոնացմանը, հույզերի բացահայտմանը գույների միջոցով, շարժումների կոորդինացիային, տեսատարածական ընկալմանը, մանր շարժողականությանն ու ուշադրության կենտրոնացմանը:
  Արտթերապիա, վիզուալիզացիա, նեյրոբիկ վարժություններ, պարաթերապիա, հիշողությունը և ուշադրությունը ակտիվացնող խաղ-վարժանքներ: Աշխատանք մտքի հետ՝ լավատեսության վերաբերյալ զրույցներ, շնչառական վարժություններ, հույզերի հետ աշխատանք, ինտելեկտուալ խաղեր:
- **Սննդի կազմակերպման** շրջանակներում կենտրոններում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- **Բաղնիքի ծառայության տրամադրման** շրջանակներում թվով 0 շահառու օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Տարեցների միջազգային օր Գյումրիում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/reel/805481305420125 ),
- Միջոցառում-ներկայացում Շենգավիթ ցերեկային կենտրոնում, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/reel/780466681520700 ),
- Միջոցառում նվիրված տարեցների միջազգային օր «Մաքսիմա» ռեստորանային համալիրում, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/reel/4075629986023915
- Միջոցառում՝ Սերունդների երկխոսություն. (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/reel/671184879366009 ),

- Շաշկու մրցաշար (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0CWBzNswMKwLQaxmsvrKcyLF3JoFJYWyNMZJ68Zu9hyTRncWXJXL1quoe5F85YDrKl&id=100081543423963 ),
- QSI միջազգային դպրոցի աշակերտների հանդիպումը ցերեկային կենտրոնի տարեցների հետ, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/reel/2020681408752048 ),
- Էքսկուրսիա՝ Երևան պարկ, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0UxgoXRxh7gt7a8RgsuBRiifeNRvj9vg7ex2Ezmf5r7Rw3uCgrDWW21JAvCjNTr55l&id=100081543423963 ),
- Երգ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/reel/1985815138918254 ),
- Ձեռքի աշխատանք, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02avfSnG4Ym5nFNykCXmkkBrgZEqWFzsB72YJkchytxAFCuo4DRpkfbggzWJQMicKRl&id=100081543423963 ),

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խոհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար.

- Ցերեկային կենտրոնի աշխատակիցները մասնակցել են. PUM կազմակերպության միջազգային փորձագետի կողմից «Հիշողության խնդիրներ ունեցող տարեցների հետ աշխատանքի առանձնահատկությունները: Նորարարական մոտեցումները տարեցների եւ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքում ակտիվ ծերացում» թեմայով երկօրյա դասընթացին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 48 / 48 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 42 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 4 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 3 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 45 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 45 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 48 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 48 |
| 5.1 | Հայ եկեղեցու պատմություն, կերպարվեստ | 25 |
| 5.2 | Կինեզոլոգիա | 32 |
| 5.3 | Ձեռքի աշխատանք | 9 |
| 5.4 | Երգ | 26 |
| 5.5 | Խոհարարական | 7 |
| 5.6 | Առողջապահական | 37 |
| 5.7 | Գրական | 18 |
| 5.8 | Յոգա | 11 |
| 5.9 | Մարմնամարզություն/պար | 29 |
| 5.10 | Կար | 3 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 50 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 37 |
| 7. | Այլ ծառայություն (նշել)<br>Բուժքույրական ծառայություն | <br>50 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «15»12.2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)